«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիր

Մարդու իրավունքների ոլորտում հատկորոշած խնդիրների և ծրագրի շրջանակներում դրանց լուծմանը ուղղված գործողությունների ներկայացում

Մարատ Ատովմյան

Շատերի համար աշխատանքը հասանելի չէ՝ կապված էթնիկ պատկանելության, սեռի, սեռական կողմնորոշման, տարիքի, ընտանեկան դրության, արտաքին տեսքի, հաշմանդամության, աշխատանքային փորձի բացակայության և մի շարք այլ հանգամանքներից ելնելով:

Խտրականությունը իր բացասական ազդեցությունն է թողնում նման անհատների կենսամակարդակի վրա՝ բացառելով վերջիններիս աշխատելու հնարավորությունը կամ ներառելով նրանց ցածր վարձատրվող աշխատանքներում:

Խտրականությունը կարելի է դիտարկել հետևյալ 3 հարթություններում:

Օրենքի առաջ անհավասարություն

Կարգավիճակից բխող խտրականություն

Ներկայացուցչական կառույցներում որոշ խմբերի բացակայություն կամ թույլ ներգրավվածություն

Խտրականության օրենքների շրջանակը ըստ երկրների տարբերվում է: Շատ երկրներ ունեն սահմանադրական երաշխիքներ, որոնք ներառում են պետական հստակ գործողություններ և առանձին օրենքներ, որոնք վերաբերում են խտրականությանը թե մասնավոր, թե հանրային ոլորտում:

Որոշ երկրներում առկա են խտրականության կանխարգելմանը վերաբերող առանձին օրենքներ և կարգավորումներ տարբեր ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը և ծառայությունների մատուցումը:

Մշտադիտարկում և քաղաքականությունների մշակում

Խտրականության դեմ պայքարի հանրային քաղաքականությունների բարելավում՝ մշտադիտարկման և քաղաքականությունների մշակման միջոցով:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար համայնքահեն ծառայությունների մշտադիտարկում՝ ներառյալ ՔՀԿ–ների համարմշտադիտարկման գործիքի մշակումը (Դանիա, ″Ոսկե ցուցիչներ″: Ցուցիչների փաստաթղթում ներառված են 10 ցուցիչներ. հավասարություն և հակախտրականություն, բազմազանություն և իրազեկվացության բարձրացում, մատչելիություն և մոբիլիզացում, ազատություն և անձնական ինտեգրացիա, անկախ բնակություն և համայնքային ներգրավում, կրթություն, առողջապահություն, Աշխատանք, հասարակական պաշտպանություն, քաղաքականությանը մասնակցություն):

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ